

Թիւ 25666
Մարտ 8, 1978

Արժանաշնորհ
Տ. Գարեգին ԲՅՆյ. Գասպարեան
Հովիւ ՌԼԵՍԹՂԷՍԹՐԻ Հայց. Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Գրէսթվուա.

Սիրելի Տէր Գարեգին,

Ստացած ենք Մարտ 7, 1978 թուակիր ձեր անդեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 12ին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կլի վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Տիկ. Գարպըրա Տօրեան
Հաուըրա Տօրեան
Հաուըրա Նասյեան
Վինսընթ Կիւրահեան
Արգար Օմարթեան
Արա Եիմշիտեան